

ՇՈՒՇԻԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Կարինե Ղուլյան
Մեսրոպ Մաշտոց Համալսարան
Արցախ

Անտառային

Արցախում պարբերական մամուլի սկզբնավորումը և հետագա զարգացումը անխզելիորեն կապված են Շուշի քաղաքի հետ, որը 19-րդ դարում դարձել էր Այսրկովկասի առևտրական, արհեստագործական ու մշակութային խոշորագույն կենտրոններից մեկը: 1874 թվականից սկսած մինչև 1920 թվականի մարտը Շուշիում լույս է տեսել 2 տասնյակից ավելի անուն թերթ և հանդես, որոնցից միայն 3-ը՝ ռուսերեն:

Գրեթե մեկ դար տևած մշակութային աննախադեպ վերելքը, սակայն, ընդհատվեց 1920 թվականի մարտի 23-ի սահմուկեցուցիչ դեպքերի հետևանքով, երբ թուրք-թաթարական(ադրբեջանական) արյունարբու մարդասպանների կողմից հրի մատնվեց հայկական թաղամասը՝ համամարդկային նշանակության իր հոգևոր-մշակութային կոթողներով ու արժեքներով, իսկ դրանք տքնաջան աշխատանքով ու ստեղծագործական քանքարով արարած մարդիկ սրի քաշվեցին...:

Բանալի բառեր՝ Շուշի, տպագրություն, տպարան, պարբերականներ, մամուլ, պատմություն, գրքեր, մշակութային:

Ինչպես հայտնի է՝ հայ գրքի տպագրությունը սկզբնավորվելով հայրենիքից հեռու՝ օտար ավերում՝ Վենետիկում /1512թ./, ճյուղավորվեց /Մադրաս, Կալկաթա, Վիեննա, Կ. Պոլիս, Զմյուռնա և այլուր/ ու միայն 1771թվականին հասավ Էջմիածին: Հետևաբար, Շուշին՝ հայ տպագրության այս կարևորագույն օջախը, բուն Հայաստանում, Էջմիածնից հետո, ըստ հերթականության, երկրորդն էր, իսկ ամբողջ Այսրկովկասում, երկրորդը՝ Թիֆլիսից /1823թ./ հետո: Մեսրոպատառ առաջին գիրքը՝ «Պատմություն Սուրբ Գրոց» խորագրով Շուշիում լույս տեսավ 1828 թվականին, նախորդ դարում շվեյցարացի քարոզիչների կողմից բացված առաջին տպարանում [5, էջ 31]:

Երկրորդ տպարանը Հայաստանի տարածքում շվեյցարացի ավետարանական քարոզիչներ՝ Ավգուստ Դետրիխտի և Ֆելիցիան Չամբեգայի կողմից 1827 թ. Շուշիում հիմնադրված տպարանն էր, որոնց ետևում էր կանգնած Շվեյցարիայի Բազել քաղաքի «Ավետարանական քարոզչական ընկերությունը»: Նրա հիմնական նպատակը, սկսած 1823 թվականից, բողոքականության քարոզչությունն էր: Վեց տարվա ընթացքում տպարանը հրատարակել է 13 անուն գիրք, ընդ որում Բազելի քարոզչական ընկերությունն Արցախում առաջին անգամ գործածում է աշխարհաբար լեզուն: 1837 թ. բողոքականության ազդեցության ուժեղացումից վախեցած, տեղի հայ հոգևորականության ընդվզումներից դրդված, ռուսական իշխանությունները արգելեցին բազելցիների միսսիոներական գործունեությունը Շուշիում: Բազելի քարոզչական ընկերության գործունեությունը ռուսական կառավարության կողմից դադարեցվում է, և նրանց գույքը՝ վաճառքի հանվում: Տպարանը գնում է Բաղդասար Միտրոպոլիտ Հասան-Ջալալյանը, ով 1837 թ. կայսերական հրամանով՝ Ղարաբաղի թեմի

առաջնորդ և նույն թեմի կոնսիստորիայի նախագահ էր նշանակվել: Տպարանի անունը հիշատակվում էր այսպես. «Տպարան վիճակավոր առաջնորդին Ղարաբաղու բարձր սրբազան մետրոպոլիտի Բաղդասարայ», իսկ ավելի ուշ՝ «Ի տպարանի Հայոց Հոգևոր Տեսչութեան: Մետրոպոլիտի տպարանի անդրանիկ հրատարակությունը 1837 թվին լինում է «Շիլիոնեան կալանաւորը»՝ թարգմանությամբ Մովսես Զոհրայանի: 1839 թվին տպագրվում է «Պատմութիւն կամ յիշատակ ինչ ինչ անցից դիպելոց յաշխարհին Աղուանից»-Եսայի կաթողիկոս Հասան Ջալալյանի: 1859 թ. Վեհապետյանի միջոցներով տպարանը տպագրում է Մ. Չամչյանի ընդարձակ քերականությունը: Նրա խնդրանքով՝ մոսկվաբնակ Հովհ. Հովնանյանը տպարանին նվիրում է մի ձեռք մամուլ և հայերեն տառեր: Տպարանը վերանվանվում է «Տպարան Սրբոյ Էջմիածնի»: Այն փաստացի Էջմիածնի Մինողի սեփականությունն էր, և անվանափոխությունը՝ անկախություն վայելող Արցախի թեմին վերահսկելու մի փորձ էր: 1861թ. այդ ձևական ենթակայությունը ևս վերացվեց: 1863 թ. այստեղ տպագրվում է Մաթևոս կաթողիկոսի «Ներածութիւն աստուածաբանական գիտելաց» գիրքը (200 էջ): Քանի որ թեմը՝ հնարավորություն չունեի հոգալու տպարանի ծախսերը, իսկ Էջմիածինն էլ հրաժարվել էր ֆինանսական աջակցությունից, ուստի տպարանը գնել էր Հովհ. Հովնանյանը: Նույն թվականին, տպարանի հոգաբարձու՝ Համբարձում բեկ Սարուխանյանի դիմումով՝ Հովհ. Հովնանյանը տպարանը նվիրում է թեմական դպրոցին: Այնուհետև՝ աջակցում էր Պ. Շանշյանի (թեմականի տնօրենն էր) ծավալած հայրենասիրական-դաստիարակչական գործունեությանը: 1864 թ. թեմական դպրոցի տպարանում լույս է ընծայվում Կ. Էզյանցի «Ներքին կեանք հին Հայաստանի» աշխատությունը: 1874 թ. տպարանը տպագրում է Խորեն Ստեփանի «Հայկական աշխարհ» ամսագրի մի քանի համարներ: 1885 թ. տպարանը վերանվանվում է «Տպարան հայոց հոգևոր տեսչության»: 1884 թ. ցարական կառավարությունը փակել էր թեմական դպրոցը, ուստի Արցախի թեմը՝ ստիպված էր վերցնել տպարանի հովանավորությունը: Վերանվանումը փաստացի այդ փոփոխության ամրագրումն էր: Այստեղ՝ 1888 թ., տպագրվում է Մանուկ Աբեղյանի «Նմուշները» բանաստեղծությունների ժողովածուն: Տպարանի բեղմնավոր գործունեությունը ընդհատվում է 1920 թ.՝ մուսավաթական Ադրբեջանի օկուպացիոն, պատժիչ զորքերի կողմից՝ Շուշիի գրավմամբ: Նրանք թալանում են տպարանի գույքը և հրդեհում շենքը: Խորհրդային իշխանության տարիներին՝ տպարանի շենքը վերակառուցվում է մասնավոր մարդկանց ուժերով: Այն վերակառուցվել է 1950-ական թթ. երկու քուրդ եղբայրների կողմից՝ շենքի մաքրման ժամանակ գտնված ոսկով: 1992 թ.՝ Շուշիի ազատագրման ժամանակ, նահանջող թշնամին, մեր զորքերի առաջխաղացումը դժվարեցնելու համար, հրդեհում է շենքը:

Այսօր՝ հոգևոր տեսչության տպարանը վերանորոգվում է որպես արվեստի ցուցասրահ[3]:

«Հայոց հոգևոր տեսչության տպարանում» 1864-ին լույս տեսան Պերճ Պռոշյանի «Ղարաբաղու տիրամայր Մուրբ Մարիամու օրիորդաց ուսումնարանի բացվիլը» գրքուկը, ինչպես նաև նրա թարգմանությամբ Կ. Էզյանցի «Ներքին կյանք Հին Հայաստանի» աշխատությունը, իսկ 1866-ին՝ Հ. Թերձիմանյանի «Համառօտ պատմութիւն հայոց» աշխատությունը:

1830-1840 թվականներին այս տպարանում լույս տեսան Եսայի Հասան Ջալալյանի «Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից», «Ծիսարան, որ կոչի Մաշտոց», «Տետր այբբենական» և «Կրօնագիտություն» գրքերը[11, էջ 96]:

Բազելիցիների՝ Շուշիում հրատարակած գրքերի առավելությունը կայանում է նրանում, որ մոտ էին խոսակցական լեզվին, աշխարհաբար էին ու հասկանալի համարյա բոլորին:

Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի ուսուցիչ Պողոս Վարդապետ Ղարադաղցին հաստատում էր, որ 1830 թվականին բազելցիները տպագրել էին 11679 գիրք՝ սկսած հիմնադրվելու օրից[4, էջ 67]:

Լույս տեսած գրքերը հիմնականում թարգմանություններ էին և քանի որ բազելցի բողոքականները հետապնդում էին քարոզչական նպատակ, այն է՝ Անդրկովկասում ապրող այլադավերի մեջ տարածել քրիստոնեություն, ուստի նրանց հրատարակած գրքերի գերակշռող մասը կրում էր եկեղեցիական, կրոնական, բարոյախրատական բնույթ: Ահա դրանցից մի քանիսը. «Կարճառոտ աղոթագիրք», «Ընթերցուացք» ի սուրբ գրոց «Հին կտակարանին», «Նոր Կտակարան», «Տասն ու վեց կարճառոտ քարոզներ» և այլն: Տպարանում լույս էին տեսնում նաև գիտական և ուսուցողական բնույթի գրքեր: Դրանցից հիշատակման արժանի է 1829–ին լույս տեսած Համառոտաթիւն հայկական քերականության գիրքը[11, էջ 95-96]:

1881 թվականին Շուշիում բացվեց «Միրզաջան Մահտեսի Հակոբյանի» տպարանը, որն իր գոյության 25 տարիների ընթացքում հրատարակել է մեծ քանակությամբ գեղարվեստական ու պատմագիտական գրականություն, դպրոցական ձեռնարկներ ու դասագրքեր, թերթեր ու ամսագրեր: Առաջին անգամ առանձին գրքով լույս տեսան Բաֆֆու «Խենթը», Լեոյի «Վե՛ պ թե պատմություն», «Վահան Մամիկոնյան», «Իմ հիշատակարանը», Ա. Բահաթրյանի «Հին հայոց տաղաչափական արվեստը» արժեքավոր երկերը: Թարգմանական գրականությունից հիշատակելի են Ֆիրդուսու «Շահնամեն»/1893թ./, Ա. Դոդեի, Ջ. Դրեպերի և այլոց գործերը[5, էջ 31-32]:

Միրզաջան Մահտեսի Հակոբյանը, 1883թ. ապրիլին Կովկասի մամուլի կոմիտեին դիմելով հայտնել է, որ ինքը պատրաստ է հայերենից բացի տպագրել նաև պարսկերեն, ռուսերեն, ինքը կարող է նաև շաբաթական երեք անգամ հրատարակել «Шушинские объявления», թերթը՝ ունենալով նպատակ. հետաքրքիր տեղեկություններ տալ Շուշիի անցյալի և ներկայի մասին ռուսերեն լեզվով ևս: Սակայն անհայտ պատճառներով առաջարկը չի ընդունվել: Մ. Հակոբյանի հիմնադրած տպարանի գործունեությունը դադարել է 1906թ. (Երևի հրդեհվել է հայ թուրքական ընդհարման ժամանակ)[4, էջ 68]:

19-րդ դարի 80-ական թվականներից սկսած՝ Շուշիում գործող տպարաններից Մ. Մահտեսի տպարանն իր տեսակի մեջ առաջինն է, ուր նոր ծավալներ է ընդունում տպագրական գործունեությունը և մինչև խորհրդային շրջանը այն դառնում է Արցախի միակ բարեկարգ տպագրական օջախը: Կովկասի հայ մամուլը պարբերաբար հաղորդումներ էր տալիս Շուշիի Մ. Մահտեսիի հրատարակչական գործի մասին: «Տարագ» ամսագիրը, բարձր գնահատական տալով գրում է. «Տպագրութեան արուեստը Շուշիում լավ է դրուած, այստեղ կան երկու հարուստ /Մ. Մահտեսիի, Տեր-Մահակյանի/ տպարաններ, որոնց մեջ գործում են արագատիպ մեքենաներ: Կովկասում Շուշին Թիֆլիսից հետո առաջին տեղն է բռնում հայերեն գրքերի հրատարակութեան գործում է եւ այդ կողմից նա առաջ է անցել այնպիսի մեծ ու հայաշատ քաղաքից, որպիսին՝ Բաքուն [8, էջ 62]:

1912-ին հայ գրերի գյուտի 1500-ամյակի և հայ տպագրության 400-ամյակի հոբելյանի օրերին, Թեոդիկը Կ. Պոլսում հրատարակվել է «Տիպ ու տառ» շքեղ հատորը, որտեղ ժամանակագրական կարգով խոսում է աշխարհի բոլոր երկրներում հիմնադրված հայկական տպարանների մասին, տրվում նրանց հիմնադիրների կենսագրությունները, լուսանկարները, տպագրված գրքերի ցուցակը: 1912թ. Կոստանդնուպոլսում հրատարակված Թեոդիկի «Տիպ ու տառ» ուշագրավ ուսումնասիրությունը ևս որոշ փաստեր է պարունակում Շուշիի տպագրական գործի և տպարանների մասին: «ՇՈՒՇԻ առաջին անգամ տպ. գործունեութիւն ունեցած են ԲՈՂՈՔԱԿԱՆ ՄԻՄԻՕՆԱՐՔ որոնց լոյս ընծայած գիրքէն յիշենք՝ Արեւել. հայերենով՝ Նոր

Կտակարանը /1832/: Այս գիրքէն առաջ Շուշիի մեջ անանուն տպագրուած կը գտնենք 3 գիրք.-
Հաւարումն ած. ային վկայութեանց, Ընթերցուածք ի Ս. Գրոց Հին Կտակարանի /1829/,
Բառարան համառօտ գրք. աշխ. /Յովսէփ Վ. Արցախեցի/ 1830: ** ՀԱՅՈՑ ՀՈԳԵԻՈՐ
ՏԵՍՉՈՒԹԵԱՆ տպարանը կը բանայ Ղարաբաղի առաջնորդ Պաղտասար որ Միսիօնարաց
թողուցած տառերը գնած էր: Այս տպարանը վերջէն նոր տառեր կընդունի Սուկուայէն, բայց 70-
ական թուականին փճացումի վիճակին կը հասնի՝ երբ Խ. Վ. Ստեփանէ հոնկէ լոյս կ'ընծայեր
Հայկական աշխարհի /*/ քանի մը թիւերը: Յետոյ վերաբացուելով՝ լոյս ընծայած է
մեծամասնութեամբ Լեօի երկերը.- Վե՞պ թէ պատմ. /1887/, Ծայրեր, Կոյրի աղջիկը, Վահան
Մամիկոնեան /1888/, Իմ յիշատակարանը, Սպանուած հայրը /1891/, Թաթախման գիշերը /1892/,
նն: **ՄԻՐԶԱԶԱՆ ՄՀՏ. ՅԱԿՈԲԵԱՆՑ տպած է Բաֆֆի «Խենթը» /1881/, Արագը տարին կտարի
/1883/, Ուխտաւորի յիշատակարանը/ [2, էջ 183]:

Հայ գրքի տպագրութեան ասպարեզում մի ուրույն տեղ է հատկացվում 80-ական
թվականներին ձևավորված Սանկտ-Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների կից
հայկական ուսանողական կազմակերպություն հրատարակությունը: Այդ կազմակերպության
առավել ակտիվ անդամներից էին Սարգիս Կուկանյանը, Եփրեմ Տեր-Հակոբյանը, Հմայակ
Նազարյանը, Թադևոս Զաքարյանը, Ալեքսանդր Նազարյանը և ուրիշներ[12, էջ 16]:
Պետերբուրգի հայ ուսանողների կազմակերպության հրատարակչական գործը թեև ունեցավ
կարճատև կյանք՝ ընդամենը չորս տարի/1886-1890/, լոյս է ընծայել շուրջ երկու տասնյակի
հասնող գրքույկներ: Ուշադրության արժանի է 1879 թվականի Շուշիում Տիգրան Նազարյանի
բացած հրատարակչական գրասենյակը: Նա հրատարակել է Ն. Տեր-Ավետիքյանի «Քնար-
խոսնակը» և իր թարգմանությամբ լոյս է ընծայել Հ. Մենկևիչի «Պոզնանի ուսուցչի օրագրից»
պատմվածքը, որը, ի դեպ, լեհ նշանավոր գրողի հայերեն առաջին գրքույկն էր: Տ. Նազարյանը
տպագրել է Ալ. Դոդեի երկու մանրավեպը, Կ. Մելիք-Շահնազարյանի/, որը գրական
շրջաններում հայտնի է «Տմբլաչի Խաչան» անունով/ «Ղըլըցե կընանոց պընը փեշակը»
կենցաղագրական երգիծապատումը, /որը գրված է Ղարաբաղի բարբառով/, ապա նաև
հեքիաթագիր Անդերսենի «Սոխակը» և «Խոզարածը ու արքայադուստրը» հեքիաթները[12, էջ
18-19]:

Ղարաբաղի գրական - հասարակական, հրապարակախոսական-հրատարակչական
գործի բարելավումը շատ-շատերին էր մտահոգում: Նրանց մի մասը, որ իրերի բերումով
գտնվում էր հայրենիքից դուրս, կարողանում էր որոշակի օգնություն ցույց տալ տեղի
մտավորականներին՝ ի կատար ածելու նրանց հայրենանվեր նախաձեռնումները: Սրանցից
մեկն էր՝ Համբարձում Առաքելյանը: Նրա գործունեությունը ավելի բեղմնավոր էր 1880-ական
թվականներին: 1881թ. նա Շուշիում հիմնում է Կովկասյան հայ բարեգործական ընկերության
առաջին գավառական ճյուղը՝ դառնալով նրա նախագահության անդամն ու ապա՝ ղեկավարը[1,
էջ 70]: Համբարձում Առաքելյանը որոշակի օգնություն է ցույց տալիս տպարաններին՝
անհրաժեշտ տառատեսակներ և տպագրող մեքենաներ հայքաթելու գործում: Նա հայտնի է ոչ
միայն որպես հրատարակիչ ու հրապարակախոս, այլև գրող: «Շահրիար» ծածկանունով
հեղինակ է մի շարք ստեղծագործությունների /մեծ մասամբ պատմվածքների/, որոնց նյութերը
առնված են պարսկահայ կյանքից: Հ.Առաքելյանը կատարել է մի շարք թարգմանություններ,
կազմել «Հանրագիտական բառարան»: Շուշիի հրատարակչական գործում մեծ ավանդ է
ներդրել ականավոր պատմաբան ու գրող Լեոն/Առաքել Բարախանյանը/: Նա ջանք չէր ինսայում
Շուշիի տպարանները կարգավորելու, տպագրական անհրաժեշտ նյութեր հայթաթելու համար:
Լեոնի առաջին գրքույկը լոյս է տեսնում Շուշիում, 1884 թվականին: 1893թ. Բաքվում տպարանի

կառավարիչ եղած ժամանակ նա նորաձույլ տառեր է ուղարկում Շուշի: 1895թ. մշտական աշխատանքի անցնելով «Մշակ»-ի խմբագրությունում՝ Լեոն ձգտում էր հնարավորին չափ լուսաբանել Ղարաբաղի նոր սերնդի լուսավորության գործը: Հատկապես 1878-1880թթ. Շուշիում ուսուցչություն անելիս, աշխատում է ուսումնական ձեռնարկներ տպագրել և բաժանել աշակերտներին: Այդ նպատակով տեղում հրատարակել է տալիս թեմական և քաղաքային ուսումնարանի առաջավոր ուսուցիչների գրքույկները: Նրա օգնությունը մասնավորապես շոշափելի է հոգևոր դպրոցի տպարանը գործարկելիս: Մեղրակ Մայրիկյանը հանդես էր գալիս որպես հրապարակախոս: Նրա մի շարք հոդվածները, որոնք մինչև հիմա էլ պահպանում են իրենց ուժը, լույս են տեսնում «Մեղու Հայաստանի», «Արարատ»-ի, «Վարժարան»-ի էջերում: Անուրանալի է Գրիգոր Տեր-Ղազարյանի ներդրումը ոչ միայն ազգային ուսումնարանների առաջադիմության, լուսավորական գործի աշխուժացման, այլև հրատարակչական ասպարեզում: Նա կազմում էր մայրենի լեզվի ուսումնասիրման ձեռնարկներ և տպագրում Շուշիում: Միշտ վերահսկում էր, որ իր աշխատանքը լույս տեսնի տպագրական բարձր կուլտուրայով, լավ ձևավորմամբ ու առանց սխալների[1, էջ 72-73]:

Արցախում պարբերական մամուլի սկզբնավորումը և հետագա զարգացումը անխզելիորեն կապված են Շուշի քաղաքի հետ, որը 19-րդ դարում դարձել էր Այսրկովկասի առևտրական, արհեստագործական ու մշակութային խոշորագույն կենտրոններից մեկը[5, էջ 23]:

1905 թվականից հետո Շուշիում գործել են Բագրատ Տեր Սահակյանի և Մելքոն Բաբաջանյանի տպարանները, որոնց գործունեությունն ընդհատվել է 1920 թվականի մարտի 23-ին՝ Շուշիի բարբարոսական ավերման ժամանակ: Այդ ժամանակամիջոցում հրատարակվել է ավելի քան 150 անուն գիրք: Իսկ 1874 թվականից սկսած մինչև 1920 թվականի մարտը Շուշիում լույս է տեսել 2 տասնյակից ավելի անուն թերթ և հանդես, որոնցից միայն 3-ը՝ ռուսերեն: Շուշիում լույս տեսած առաջին պարբերականը «Հայկական աշխարհն» էր, որն անջնջելի հետք է թողել մեր պարբերական մամուլի պատմության մեջ: Օգտավետ նախաձեռնությունների հետևորդներ դարձան արցախյան հետագա պարբերականները՝ «Հայկական աշխարհ», «Քնար խոսնակը»/1881թ./, «Գործը»/1882-1884թթ./, «Ազգագրական հանդեսը»/1896-1916թթ./, «Ղարաբաղ»/1911-1912/, «Միություն»/1913/, «Միրաժ» /1913-1917/, «Փայլակ»/1915-1917/, «Ծիածան»/1916/, «Պայքար»/1916/, «Նեցուկ»/1917/, «Եռանդ»/1917/, «Աշակերտ»/1917/, «Ապառաժ»/1917/, «Սրինգ»/1917/, «Ղարաբաղի սուրհանդակ»/1919/, «Արցախ»/1919/, «Նոր կյանք»/1919/, «Գյուղացիական կոմունա»/1920/ և այլ պարբերականներ: Շուշիում լույս տեսած ռուսերեն «Շուշինսկի լիստոկ» /1911-12/, «Շուշինսկայա ժիզն»/1913-1914/ և «Գոլոս նարոդա»/1919/ թերթերը տպագրվում էին հայ մտավորականների ուժերով[5, էջ 32-33]:

Արցախի դպրոցներին նվիրված աշխատության մեջ Հ. Գրիգորյանն ու Գ. Հարությունյանը կանգ են առել նաև Արցախում հայ մանկավարժական մամուլի սկզբնավորման վրա՝ մասնավորապես նշելով «Հայկական աշխարհի», «Գործի», «Ազգագրական հանդեսի», ինչպես նաև «Ղարաբաղ», «Փայլակ», «Շուշինսկայա ժիզն» և ժամանակի այլ պարբերականների մասին, որոնցում այս կամ այն կերպ իրենց արտահայտությունն են գտել ուսուցման ու դաստիարակության հարցերը: Գրքի տարբեր էջերում նույն կտրվածքով հիշատակվում են նաև

Շուշիում լույս տեսած մյուս, այդ թվում՝ աշակերտական պարբերականները[6]:

«Հայկական աշխարհ» ամսագիրը Արցախի պարբերակն մամուլի առաջնեկն է: Այդ կարևոր նախաձեռնության հեղինակը ժամանակի ճանաչված հասարակական գործիչ, խմբագիր – հրատարակիչ Խորեն Ստեփանեն էր: Պարբերական մամուլի պատմության ուսումնասիրողների մի մասը /Մ. Մխիթարյան, Գ. Լևոնյան, Ա. Կիրակոսյան և ուրիշներ/ «Հայկական աշխարհը» համարում են «Կռունկ Հայոց աշխարհի» պարբերականի



շարունակությունը, այնինչ՝ «Հայկական աշխարհը» լույս է տեսել նոր՝ 1-ին և 2-րդ համարակալումներով: Ի դեպ, նախապես ժամանակի լրատվամիջոցներում շանուցվել է, որ հրատարակվելու է նոր պարբերական՝ ի դեմս «Հայկական աշխարհի»: Այսպես, օրինակ, «Մշակը» 1874 թ. մարտի 14-ի համարում այդ առիթով գրել է. Կառավարությունից թույլատրված նոր ծրագրով այս 1874 թվի ապրիլ ամսից պետք է հրատարակվի նոր օրագիր՝ «Հայկական աշխարհ»...

Անվանի պատմաբան ու հայագետ Լեոն, թեև գրել է, որ Ստեփանեն Շուշիում շարունակեց իր ամսագրի հրատարակությունը, բայց միաժամանակ ընդգծել է. «...այս առաջին անգամն էր, որ Շուշում լույս էր տեսնում պարբերական հրատարակություն» /Լեո, Պատմություն Ղարաբաղի Թեմական հոգևոր դպրոցի /1838-1913/, Թիֆլիզ, 1914, էջ 374/[7, էջ 16]:

«Հայկական աշխարհ»-ը գրական և մանկավարժական /վերջին շրջանում կրոնական և մանկավարժական/ ամսագիր էր: Հրատարակվել է Շուշիի հոգևոր թեմական դպրոցի տպարանում 1874թ. ապրիլ-հուլիս ամիսներն ընկած ժամանակահատվածում: Շուշիում տպվել է 4 համար:

Ընդհանուր առմամբ՝ լույս է տեսել 123 համար: 1864-1865թթ. համարները կոչվել են «Հայկական աշխարհի կռունկ», որը շարունակությունն էր «Կռունկ հայոց աշխարհի» պարբերականի: Տպագրվել է 1864-1871, 1876թթ.՝ Թիֆլիսում, 1874-1875թթ.՝ Գանձակում, 1877-1978թթ. Բաքվում, 1879թ.՝ Երևանում: Տպ.՝ «Հայկական աշխարհի» և այլն՝ ըստ քաղաքների[5, էջ 42-43]:

Ամսագրի անդրանիկ խմբագրական մարմնի կազմի մեջ մտնում էին Արցախի մշակութային գործիչներ Համբարձում Առաքելյանը, Հովհաննես Քոջուրեկյանը, Մաղաքիա Պլուզյանը, Մովսես Աթաբեկյանը, իսկ ավելի աչքի ընկնող հոդվածագիրներն էին մեր մամուլի անխոջ մշակներ Գրիգոր Արծրունին, Ներսիսյան դպրոցի հոգաբարձու Գրիգոր Իզմիլյանը և ուրիշներ:

«Հայկական աշխարհ»-ը, լինելով առաջին մանկավարժական պարբերականն Արցախում, իր կարճատև գործունեության ընթացքում կարևոր դեր կատարեց երկրամասի գիտակրթամշակութային կյանքում[8, էջ 66-67]:

Արցախահայ մամուլի պատմության այս շրջանում ուրույն տեղ է գրավում շուշեցի Նիկողայոս Տեր-Ավետիքյանի «Քնար խոսնակ» գրական-պարբերական ժողովածուն: Պարբերականը լույս է տեսել 1881թվականին և ունեցել ընդամենը մեկ համար: Նա ոչ միայն խմբագրել է պարբերականի մեջ զետեղված նյութերը, այլև ինքն էլ կազմել ու շարադրել է

թարգմանություններն ու տարաբնույթ նյութերը: Թարգմանությունները կատարված էին ռուս և եվրոպական դասականներից՝ Պուշկինի, Լերմոնտովից, Հայնեից, Գյոթեից, Շիլլերից, Բայրոնից և այլ հեղինակներից[8, էջ 68-69]:

Ա. Ս. Պուշկինի մահվան 100-ամյակի առթիվ ՀԽՍՀ պատմության և գրականության ինստիտուտի կողմից հրատարակված ժողովածուում, ինչպես նաև «Հայ նոր գրականության պատմության» երրորդ հատորում շատ սեղմ կերպով խոսվել է նաև 1881 թվականին Շուշիում տպագրված «Քնար խոսնակի» մասին[6]:

1881-1884թթ Արցախի մշակույթի, հասարակական-քաղաքական կյանքում, ինչպես և լուսավորության տարածման ասպարեզում մեծ դեր է խաղացել ականավոր մշակութային գործիչ Սիմոն Հախումյանի «Գործ» գրական, քաղաքական և ազգային հանդեսը: «Գործ» հանդեսի անդրանիկ համարը լույս է տեսնում 1882թ. մայիսին, Թիֆլիսում, Ա. Վարդանովի տպարանում, ընդամենը մեկ համար՝ 112 օրինակով: «Գործ» հանդեսն իր լուրջ ավանդն է ներդրել Արցախի պատմության, երկրամասում տեղի ունեցող մշակութային վերընթացը լուսաբանելու գործում[8, էջ 69-70]:

Արցախի պարբերական մամուլի վերաբերյալ, բնականաբար, տեղեկություններ են պարունակում հայ պարբերական մամուլի պատմությանը նվիրված աշխատություններում և համահավաք մատենագիտական բնույթի գրքերում: Դրանցից կարելի է նշել Գարեգին Լևոնյանի աշխատությունները : Մասնագետների կողմից մատնանշված թերություններով հանդերձ՝ նրա կազմած վերջին մատենագիտությունն արժեքավոր տեղեկատու ձեռնարկ է հատկապես մինչև 1917 թվականը հրատարակված հայ պարբերականների ուսումնասիրության համար:

XIX դարի հայ գյուղագրության հիմնախնդիրներն ուսումնասիրած գրականագետ Կ. Ա. Դանելյանը մի ամբողջ գլուխ է նվիրել «Գործ» հանդեսին, ժողովրդասիրական գրականության համատեքստում հանգամանակից քննելով այնտեղ տպագրված մի շարք կարևոր նյութեր: Գրականագետը նույն գրքում մի քանի անգամ անդրադարձել է նաև «Ղարաբաղ» թերթի հրապարակումներին:

ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կողմից հրատարակված ժողովածուում, որը պարունակում է հայ պարբերական մամուլի պատմության վերաբերյալ հոդվածներ ու ակնարկներ, Մարգո Մխիթարյանը հատուկ հոդվածով անդրադարձել է «Գործ» հանդեսին և առաջին անգամ ցույց է տվել հանդեսի կատարած դերը Շուշիի և ընդհանրապես ամբողջ Արցախի մշակութային ու գրական կյանքում: Հատկապես ուշագրավ են հանդեսի հրատարակման, ստեղծագործական պրպտումների և հրատարակչի գործադրած ջանքերի վերաբերյալ մանրամասն տեղեկությունները: Իսկ ավելի ուշ Արևելահայ պարբերական մամուլի պատմությանն անդրադառնալով՝ Մ. Մխիթարյանը ընդամենը մի փոքրիկ պարբերություն է հատկացրել Շուշիում հրատարակված «Գործ» հանդեսին: 1882-84թթ. Շուշիում հրատարակվել է Սիմեոն Հախումյանի «Գործ» հանդեսը, որի շուրջն էին համախմբված Մոսկվայի Պետրովսկի գյուղատնտեսական ակադեմիայի հայ ուսանողական խմբակի մի շարք անդամներ: Լիբերալ-նարոդնիկական այս օրգանը, որը հիմնականում քննարկում էր համայնական հողատիրության պրոբլեմը և իդեալականացնում համայնքը, այն համադրում է նոր զարգացող կապիտալիզմի ավերիչ բնույթին, երկար կյանք չունեցավ և չկարողացավ վճռական դեր կատարել հայ հասարակական կյանքում[6]:

XIX դ. դարի երկրորդ կեսի Արցախի մշակույթի երախտավորների շարքում իր բացառիկ տեղն ունեւ գրականագետ, թարգմանիչ-մանկավարժ Սիմեոն Հախումյանը (1859-1918 թթ.): Բեղմնավոր մանկավարժական, հասարակական-քաղաքական գործունեությանը զուգընթաց՝ Մ.

Հախումյանը զբաղվում է նաև պարբերական մամուլի հրատարակման գործով: Դեռ ուսանողական տարիներին ակտիվորեն աշխատակցում էր «Մշակ», «Մեղու Հայաստանի», «Արարատ» և այլ պարբերականներին: Հաճախ թղթակցել է նաև ռուսական մամուլի տարբեր օրգաններին: Նա փափագում էր ունենալ տպագիր օրգան և դրա միջոցով հաղորդակցվել ժողովրդի հետ: Այդ նպատակով 1881 թ. փետրվարին Ս. Հախումյանը Կովկասի փոխարքայությունից սեփական ամսագրի լույսընծայման թույլտվություն է խնդրում: Գրաքննչական մարմինները չեն առարկում ամսագիր հրատարակելու վերաբերյալ նրա ներկայացրած ծրագրին, և նույն թվականի նոյեմբերի 27-ին նրան թույլատրվում է հիմնելու «Գործը»: Կովկասի փոխարքայության գլխավոր վարչությունն այս որոշումը ընդունում է պայմանով, որ ամսագրի բոլոր նյութերը ենթարկվեն խիստ գրաքննության: Պարբերականի ծրագրի նախագիծը լույս է տեսնում «Մշակի» 1881 թ. դեկտեմբերի մի քանի համարներում: «Գործի» անդրանիկ համարի (1882 թ. մարտին լույս է տեսնում 13 էջանոց մի տետր՝ «Գործ» անունով) մասին փոքրիկ հաղորդագրություն է տպագրվում «Մշակի» 1882 թ. N 84-ում: Այնտեղ նշվում է, որ «Գործ» հանդեսում լուսաբանվում են տեղական, անդրկովկասյան և արտասահմանյան կյանքը, քաղաքական ներքին տեսությունները, գիտական, մանկավարժական և բարոյախոսական նյութեր, գրախոսություններ, թարգմանական ստեղծագործություններ, մշակութային կյանքին վերաբերող այլ նյութեր: «Գործ» հանդեսի հեղինակությունը բարձրացնում էին ոչ միայն խմբագիր-հրատարակիչը, այլև նրա շուրջը համախմբված Հ. Առաքելյանը, Մ. Առուստամյանը, Ն. Տեր-Ավետիքյանը, Օ. Տեր-Սովսիսյանը և ուրիշներ: «Գործն» իր շուրջ համախմբեց ժամանակի առաջադեմ հայ գործիչներին, լուսավորական-գաղափարական աշխատանք էին կատարում արցախահայության հասարակական-քաղաքական կյանքում: Ուշագրավ էր այն, որ մամուլի զարգացման այս շրջանում (1870-1880-ական թթ.) Արցախում ավելի որոշակի է դառնում նրա քաղաքական ուղղվածությունը: Մամուլն ավելի հարուստ բովանդակություն է ձեռք բերում, մերձենում կյանքի հրատապ խնդիրներին: Լայն էր Ս. Հախումյանի հրապարակախոսական, լրագրողական, մանկավարժական գործունեությունը: Նա աշխատում էր Թիֆլիսի հայկական դպրոցներում (1884-1896 թթ.), ղեկավարում Թիֆլիսի հայկական թատերախումբը, իսկ 1897-1898 թթ. Բաքվի հայկական թատրոնի ռեժիսորն էր, 1908 թ. խմբագրում էր «Նոր դպրոց», 1903 թ.՝ «Դաստիարակ» մանկավարժական ամսագրերը, իսկ 1916 թ.՝ «Պայքար», «Փայլակ» քաղաքական-հասարակական ու աշակերտական 11 Լումա, 1905, N 4: 12 Մշակ, 1881, դեկտեմբեր, N 42:166 Հարությունյան Մ. Գ. խմորատիպ թերթերը: «Լումա» ամսագիրը, բնութագրելով նրա 46 տարվա (1872-1918 թթ.) կյանքի ուղին, գրում է. «Ս. Հախումյանի արժանիքը ոչ թե այն է, որ նա երկար տարի գործել է իբրև լրագրող, հրապարակախոս, հմուտ հրատարակիչ և մանկավարժ, այլև նա տաղանդավոր գրականագետ է, նրա գրիչը միշտ և ամեն տեղ բուրել է մաքուր հայկական հոգով, անօրինակ և անձնվեր սեր դեպի մայրենի լեզուն, մամուլն ու գրականությունը, որովհետև նրա գրվածքները դյուրիչ են, անկեղծ, սրտից բխած, տպավորիչ, սուր ու ջախջախիչ» [9, էջ 165-166]:

1890-ական թվականներին Ղարաբաղի պարբերական մամուլի պատմության մեջ հայտնի է միայն Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդես»-ի առաջին գրքի լույս ընծայումը: Այն հրատարակվում է Մ.Մահտեսի-Հակոբյանի տպարանում, 1896 թվականին: «Ազգագրական հանդեսը» ունեցել է 26 գիրք: Նրա հրատարակությունը տևում է մինչև 1916թ.: 1910թ. Շուշիում հիմնադրվում է Մելքոն Բաբաջանյանի տպարանը: Այնտեղ տպագրված առաջին թերթը «Ղարաբաղ»-ն էր, որի լույսընծայման համար իրենց ավանդը ներդրեցին և Ջավեն

Վարդապետը, և բժիշկ Նիկոլայ Յարամիշյանը: Այդ մասին կան բազմաթիվ գրագրություններ Վրացական ՍՍՀ պետական կենտոնական պատմական արխիվում[1, էջ 78]:

1911-1914թթ. Ղարաբաղում լույս են տեսնում ոչ միայն հայերեն, այլև ռուսերեն տպագիր օրգաններ, որոնք այս կամ այն չափով նպաստում են ժողովրդի առաջադիմության, հոգևոր կյանքի զարգացման, լուսավորության տարածման գործին: Առաջին ռուսերեն թերթը՝ «Շուշինսկի լիստոկ»-ն էր (խմբագիր-հրատարակիչ՝ Շամիլ Ա. Մելիք-Ղարազյոզով), որի առաջին համարը լույս տեսավ 1911թ. հունիսի 9-ին: Այն բաղկացած էր չորս փոքրածավալ էջերից/ յուրաքանչյուր էջը չորս սյունակով և տպագրվում էր Մ. Բաբաջանյանի տպարանում: Թերթը լույս էր տեսնում շաբաթը երկու-չորս անգամ: «Շուշինսկի լիստոկ»-ի երևան գալը ինքնին վկայում էր, որ հեղափոխական վերելքի հետ միասին հարություն էր առնում մշակութային կյանքը, ստեղծվում էին տպագիր օրգաններ, ուժեղանում էր աշխատավորության շրջանում կատարվող գաղափարական աշխատանքը: «Շուշինսկի լիստոկ»-ի վերջին համարը լույս է տեսել 1911թ. հոկտեմբերի 23-ին:

Գավառի հիմնական թերթերից մեկը «Շուշինսկայա ժիզն»-ն էր, որի առաջին համարը լույս է տեսնում 1913թ. հունիսի 21-ին: Թերթի առաջին խմբագրականը վերնագրվում է՝ «Շուշի, 21-ը հունիսի»: Սա իր անկեղծ խոսքն է ուղղում ընթերցողներին, գտնելով, որ թերթի հրատարակությունը, իրոք, օրվա պահանջն է դարձել և ձգտելու է հետաքրքիր ձևով լուսաբանելու աշխատավորների կյանքը[1, էջ 116-120]: Թերթի ութերորդ համարում բացվում է «Տեղեկատու» բաժինը: Նրա վերջին համարը լույս է տեսնում 1914թ. դեկտեմբերի 21-ին: «Շուշինսկայա ժիզն»-ը պայքար ծավալեց գավառի հետամնացության տարածմանը, օգնել աշխատավորներին՝ դուրս գալու դարավոր խավարից: Այս գործում, ինչ խոսք, վճռական դեր խաղաց խմբագիր Ստեփան Մանդինյանը[1, էջ 126]:

Այսպիսով, Ղարաբաղի ռուսական պարբերականները, ծնվելով հեղափոխության վերելքի ժամանակաշրջանում, լուսաբանելով գավառի տխուր կացությունը, օգտակար նյութեր տպագրելով տնտեսական և հոգևոր կյանքի բնագավառներից, չհասան այն մակարդակին, որ պայքարի ճիշտ ուղին էր նշում[1, էջ 128]:

1912թվականից սկսած, երբ ոչ միայն Ռուսաստանի խոշոր քաղաքներում, այլև հետամնաց գավառներում ծայր էին առել հեղափոխական ընդվզումները, Շուշիի թեմական դպրոցի սովորողները համախմբված էին աշակերտական երկու՝ «Միություն» և «Միրած» կազմակերպություններում: 1913թ. սկսվում է հրատարակվել «Միրած» կազմակերպության համանուն անլեզալ խմբատիպ ամսագիրը, որի յուրաքանչյուր համարը ուներ 10-12 տետրակի թերթի ծավալ: Այն տպագրում էին Սիմոն Ափյանը, Անդրանիկ Ավագյանը և Գրիգորի Խաչյանը: Մուր էր «Միրած» և «Միություն» պարբերականների պայքարը: «Միրած»-ը մերկացնում էր նացիոնալիստական տրամադրությունները, աշակերտությանը կոչ անում համախմբվել ինտերնացիոնալիզմի դրոշի տակ: Հետագայում «միրածականների» հետևողական պայքարի շնորհիվ «դաշնակցության» ազդեցության տակ գտնվող «Միություն»-ը կազմալուծվեց, և շատերն էլ իրենց կապերը լրիվ դաշնակցականներից, անցան «միրածականների» կողմը: Հարգանք էր վայելում աշակերտական «Ծիծաղ» հումորատիպ երգիծական ամսագիրը, որն սկսեց լույս տեսնել 1916թ. Շուշիում: Ամսագիրը հաճախ էր դուրս գալիս դպրոցական շրջանակներից, մերկացնում հետամնացությունը, սնոտիապաշտությունը, նախապաշարումներն ու գոեհիկ բարքերը: 1916թ. Շուշիում մի խումբ աշակերտների հրատարակած «Պայքար» խմբատիպ շաբաթաթերթը, «Ծիծաղ»-ի ելույթից խոցված, առաջին համարից հետո դադարեց լույս տեսնելուց: «Պայքարը» փորձում էր ազգայնական շիկացած

մթնոլորտ ստեղծել Ղարաբաղի հայ և ադրբեջանցի աշխատավորների միջև: Հին բոլշևիկ Լևոն Վարդունին պատմում է, որ Շուշիի աշակերտական մամուլի պատմության մեջ կարևոր են նաև «Սրինգ» և «Աշակերտ» հումորատիպ թերթերը: Երկուսն էլ 1917թ. հրատարակել են Շուշիի թեմական դպրոցի աշակերտները: «Սրինգ»-ին ակտիվորեն է մասնակցել վաղամեռիկ շնորհալի պոետ Գրիգոր Ներսիսյանի եղբայրը՝ Եղիշեն, կրթված ու զարգացած մի անձնավորություն, որը 1917թ. քաղաքական պայքարի ամենադժվարին օրերին մտավ բոլշևիկյան կուսակցության շարքերը: «Աշակերտ» թերթը գլխավորում էին Լևոն Վարդունին և Մովսես Հարությունյանը: Վերջինս գերազանցապես կատարում էր թերթի արտաքին ձևավորումը: «Աշակերտ»-ը ունեցավ ընդամենը 5-6 համարի կյանք: Սա բաղկացած էր 12 փոքրածավալ էջերից, հիմնականում լուսաբանում էր դպրոցական առօրեական հարցեր: Տպագրում էր մեծ մասամբ երգիծական նյութեր[1, էջ 132-135]:

1915թ. մարտի 8-ին Շուշիում լույս տեսավ «Փայլակ» թերթի առաջին համարը: «Փայլակ»-ի առաջին խմբագրականում նաև ընդգծվում է մամուլի կարևոր դերն ընդհանրապես, ապա թերթի լույս ընծայվելու նպատակը շեշտվում է, թե ինչ հարցեր են լուսաբանվելու նրա էջերում, ինչն է լինելու նրա մտահոգության օբյեկտը: «Փայլակ»-ը քննադատում է 1917թ. Շուշիում լույս տեսնող «Ապառաժ» դաշնակցական թերթը, որի խմբագիրը դաշնակցականների ցուցակի մեջ հիշատակված Ղուկասյան դպրոցի տեսուչ Հայրապետ Մուսայելյանն էր: «Ապառաժ»-ը փորձում է պատասխանել «Փայլակ»-ին՝ նրա ճիշտ խոսքը համարելով «անկոռեկտություն» [1, էջ 153-154]: «Փայլակ»-ը քաղաքական, հասարակական, սոցիալ-դեմոկրատական լրագիր էր: Լույս է տեսել 191 համար, որից 1915թ.-51, 1916թ.-97, 1917թ.-43 համար: «Ապառաժ»-ը քաղաքական, հասարակական և գրական թերթ է: Լույս է տեսել երկու շաբաթը մեկ անգամ: Լույս է տեսել 34 համար, 1917-1919թթ. ընկած ժամանակահատվածում[5, էջ 48-49]:

1916թ. Շուշիում լույս տեսավ «Ծիածան» ամսագիրը: «Ծիածանի» էջերում հրապարակված գեղարվեստական գործերը, առանձին հեղինակների առաջադեմ հայացքների տեր և պրակտիկ գործունեության մեջ իրենց լավ դրսևորված մարդիկ են: Այն տպագրվել է մեկ անգամ:

Հայ բոլշևիկյան պարբերական մամուլի պատմության մեջ նոր էջ է բացում «Նեցուկ» թերթը: Այն Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության /բոլշևիկների և մենշևիկ-ինտերնացիոնալիստների/ Շուշի կոմիտեի օրգանն էր: «Նեցուկ» թերթը լույս է տեսել 1917թ. օգոստոսի 18-ին Շուշիում: Հրատարակվել է ութ համար: «Նեցուկ»-ի ութ համարն է մեծ դեր խաղացին Շուշիի, և ընդհանրապես, Ղարաբաղի քաղաքական և հասարակական կյանքում[1, էջ 171]:

1918թ. հուլիսի 22-ին Ղարաբաղի ընդհանուր համագումարում ստեղծված «Ժողովրդական կառավարությունը» օգոստոսի 29-ին հրատարակում է «Ղարաբաղի սուրհանդակ» թերթը, այն ունեցել է մեկ համար: Այստեղ հրատարակվում են ծրագրային մի շարք փաստաթղթեր, շրջաբերականներ, կարգադրություններ, որոշումներ և այլ նյութեր [1, էջ 188]: 1919թ. «Ազգային խորհուրդը» ստեղծում է «Արցախ» անունով թերթ՝ Խմբագրական կոլեգիայի ստորագրությամբ, որը, ինչ խոսք, արտահայտում էր իր տերերի՝ դաշնակցականների շահերը: Թերթն ունեցել է առնվազն յոթ համար, որտեղ հիմնականում տպագրվում էին պաշտոնական նյութեր, կոչեր, շրջաբերականներ: Յոթերորդ համարի առաջնորդ ուղի տեղը հատկացվում է «Ղարաբաղի հայ ժողովրդի» կոչը, որը գրված է ազգայնական հովերով, անտեղի մեղադրանքներ հատուցելով բարեխոս ժողովրդին[1, էջ 191]:

1919թ. հունվարի 30-ին, Մ. Բաբաջանյանի տպարանում լույս տեսավ «Նոր կյանք»-ի առաջին համարը: Անդրանիկ համարում տպագրված նյութերը վկայում են, որ դրանք սոցիալ-դեմոկրատական խմբակի անդամների գրչի արդյունք են: «Նոր կյանք»-ը կոչ է անում. Ղարաբաղի գյուղացին չպիտի բավականանա միայն ազատության համար պայքար մղելով. նա պիտի կարողանա իր առտնին կյանքը կուլտուրական ճանապարհով կարգավորելու: Նա պիտի հանդես գա ոչ միայն իբրև կոմոդ, այլև ստեղծագործող: Եվ այդ ստեղծագործական աշխատանքը կատարող մարմինն է, որ պետք է առաջին հերթին երևան գա մեր գավառում: Լույս է տեսել ընդամենը 6 համար[1, էջ 195]:

1920թ. հուլիսին Շուշիում հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն լեզուներով լույս է տեսնում «Գյուղացիական կոմունա» թերթի մեկ համարը: Սակայն, ցավոք, այդ իսկ համարն էլ չի պահպանվել և դժվար է ընթերցողին ներկայացնել տպագրված նյութերի բովանդակությունը, էությունն ու նպատակը: «Կավկասկայա կոմունա» ռուսերեն թերթիկը լույս է ընծայվել Շուշիում 1920-1921թթ. և ունեցել է 106 համար: Նրա յուրաքանչյուր համարի առաջին էջում ընթերցողը կարդում էր «Պրովետարներ բոլոր երկրների, միացե՛ք» լոզունգը[1, էջ 201]:

1948թ. հուլիսի 15-ից 24-ը Լեռնային Ղարաբաղում էր գտնվել գրող՝ Ավետիք Իսահակյանը: Այդ օրերին Ստեփանակերտում Իսահակյանը ծանոթանում է Շուշիի 1920թ. կոտորածի ականատես Միրզա Տեր-Սարգսյանի /Միտսարի/ հիշատակարանին: Մարդկային ողբի այդ եզակի վավերագիրը ցնցում է բանաստեղծին, և նա մի շարք հատվածներ արտագրում է իր ծոցատետրում և վերնագրում «Շուշվա կոտորածը...»[10, էջ 220]:

Այսպիսով, Ղարաբաղում հրատարակվող պարբերականները չէին գերադասում հայ ժողովրդի շահերը մյուս ժողովուրդների շահերից և գրեթե միշտ հանդես էին գալիս աշխատավորների անունից: Ինչ խոսք, ամենակարևորը և վճռականը հեղափոխության հարցն էր, որը լուծել կարելի է միայն մասսաների կազմակերպված ուժի, միացյալ ջանքերի շնորհիվ [1, էջ 213]:

Գրեթե մեկ դար տևած մշակութային աննախադեպ վերելքը, սակայն, ընդհատվեց 1920 թվականի մարտի 23-ի սահմուկեցուցիչ դեպքերի հետևանքով, երբ թուրք-թաթարական (ադրբեջանական) արյունաբերու մարդասպանների կողմից հրի մատնվեց հայկական թաղամասը՝ համամարդկային նշանակության իր հոգևոր-մշակութային կոթողներով ու արժեքներով, իսկ դրանք տքնաջան աշխատանքով ու ստեղծագործական քանքարով արարած մարդիկ սրի քաշվեցին... [6]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ավագյան Մ.Գ. Նյութեր Ղարաբաղի նախասովետական շրջանի մամուլի պատմությունից.-Եր., Երևանի Համալսարանի հրատարակչություն, 1969, 231էջ:
2. Թեոդիկ «Տիպ ու տառ».- Կ. Պոլիս, 1912:
3. Հարությունյան Աշ. Պատմական ակնարկ, էլ.ռեսուրս /<http://www.artsakhtoday.com>.
4. Հարությունյան Հր. Շուշին. քարեղեն անխոս վկաներ.-Ստ., «Սոնա» գրատուն, 2013, 292էջ+12էջ ներդիր:
5. Հարությունյան Մհ. Արցախի պարբերական մամուլի պատմությունից /1874-2009թթ./.-Ստ., «Դիզակ պլուս» հրատ., 2010, 232էջ+4թերթ ներդիր:

6. Հարությունյան Մհ.Ա. Շուշին՝ որպես հայ մամուլի կենտրոն <http://shushiikachargitkentron.blogspot.com>
7. Հարությունյան Մհ. Հայաստան-Արցախ. Պատմության և արդիականության զուգահեռներում: Հոդվածների ժող.-Ստ., «Դիզակ պլուս» հրատ., 2009, 272էջ:
8. Հարությունյան Մ. Մշակութային կյանքը Լեռնային Ղարաբաղում /Արցախում/ 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին.-Ստեփանակերտ, Դիզակ պլուս, 2010, 160էջ+4ներդիր:
9. Հարությունյան Մ. Արցախի մշակույթի ակնավոր գործիչների լուսավորական գործունեությունը/1850-1920թթ./ Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 3, 2005թ., 165-166էջ:
10. Մկրտչյան Շ., Դավթյան Շչ. Շուշի: Ուրբերգական ճակատագրի քաղաքը.-Եր.: Գասպրինտ, 2008, :
11. Սևյան Վ. Գ. Շուշի: /Պատմ. Ակնարկ/.-Եր.: Հայաստան, 1991, 130էջ:
12. Վարդանյան Վ. Ս. Հայ գրահրատարակչության պատմությունից.-Եր., Հայաստան, 1987, 192էջ:

РЕЗЮМЕ

Из истории развития книгопечатания в Шуши Карине Гулян

Ключевые слова: Шуши, печатание, типография, периодическая печать, печатный лист, история, книги, культурный центр.

Возникновение и дальнейшее развитие книгопечатания в Арцахе неразрывно связано с городом Шуши, который в 19 веке был одним из крупных торговых, ремесленных и культурных центров Закавказья.

С 1874 и по 1920 год в Шуши издавалось до 30 наименований газет, из которых только 3 – на русском языке.

Плодотворная деятельность типографии прервалась в 23-го марта 1920 года – когда карательные войска мусаватистского Азербайджана заняли Шуши. Они разграбили книги и сожгли само строение типографии. В годы советской власти здание типографии было реконструировано силами частных лиц. Оно было реконструировано в 1950-х двумя братьями-курдами, на золото, которое было найдено во время расчистки здания. В 1992 году, во время операции по освобождению Шуши, азербайджанская армия подожгла это здание. Сейчас типография духовной инспекции реконструируется под музей искусств.

SUMMARY

From the History of Shushi's Printing Development Karine Gulyan

Keywords: Shushi, printing, printing-house, periodicals, press, history, books, cultural.

The beginning and further development of periodical press in Artsakh is inevitably connected with the city of Shushi, which became one of the largest South Caucasus trade, craftsmanship and cultural centers in 19 the century. In 1874 -1920 more than twenty newspapers and journals, were published in Shushi, only 3 of them in Russian. The cultural upheaval that lasted almost a century was interrupted by the terrible events of March 23, 1920, when the Armenian district was burned by Turkish bloodthirsty murderers, with its spiritual-cultural monuments and values and those who wormed harlot and creativity were murdered.